ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

N ՄՊ/51-2019

„01„04 2019թ.

Ք.Արտաշատ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՈՒՄ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2007 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 31-Ի «ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՈՒՄ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 116 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 15-րդ, ,,Նորմատիվ իրավական ակտերի մասին,, ՀՀ օրենքի 36-րդ հոդվածների պահանջներով և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 10-ի N 919-Ն որոշման առաջին հավելվածի 3-րդ կետի 26) ենթակետի դրույթները՝

Որոշում եմ՝

1. Ստեղծել Արարատի մարզի արտակարգ իրավիճակների մշտական գործող հանձնաժողով հետևյալ կազմով՝

1) Հանձնաժողովի նախագահ - ՀՀ Արարատի մարզպետ

2)Նախագահի տեղակալ - Արարատի մարզային փրկարարական վարչության պետ

3) Նախագահի տեղակալ – փոխմարզպետ

Հանձնաժողովի անդամներ՝

4) Մարզպետարանի գլխավոր քարտուղար

5) Մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետ

6) Մարզպետարանի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ

7) Մարզպետարանի ֆինանսատնտեսագիտական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ

8) Մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ

9) Մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ

10) Մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ

11) Արարատի մարզային ոստիկանության վարչության պետ

12) Արարատի մարզային ազգային անվտանգության վարչության պետ

13) ՀՀ ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ «Արարատ» մասնաճյուղի տնօրեն

14) «ՎԵՈՆ Արմենիա» ՓԲԸ Արտաշատի մասնաճյուղի տնօրեն- համաձայնությամբ

15) «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ Արտաշատի ԳԳՄ տնօրեն - համաձայնությամբ

16) «Վեոլիա ջուր արևելք» ՏՏ տնօրեն - համաձայնությամբ

17) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ «Արաքս» մասնաճյուղի տնօրեն- համաձայնությամբ

18) ՀՀ ՊՆ 5-րդ բանակային կորպուսի հրամանատար

2. Հանձնաժողովի նախագահի տեղակալ-փոխմարզպետին.

1) Վեցամսյա ժամկետում, հանձնաժողովի անդամների գործուն մասնակցությամբ, մշակել և Արարատի մարզային փրկարարական վարչություն համաձայնեցման

ներկայացնել Արարատի մարզի «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության» և «Ուժեղ երկրաշարժի դեպքում ՀՀ Արարատի մարզի գործողությունների» պլանները:

2) Յուրաքանչյուր տարի հունվարի 1-ի դրությամբ իրականացնել վերոնշյալ պլանների ճշգրտումը:

3. Հանձնաժողովի նախագահի տեղակալ-Արարատի մարզային փրկարարական վարչության պետին կազմակերպել և իրականացնել արդյունավետ մեթոդական օգնություն պլանների կազմման գործում:

4. Ուժը կորցրած ճանաչել Արարատի մարզպետի 31.08.2007թ. «Արարատի մարզում Արտակարգ իրավիճակների հանձնաժողով ստեղծելու մասին» թիվ 116 որոշումը:

5. Որոշման կատարման հսկողությունը վերապահել ՀՀ Արարատի մարզպետին:

01.04.2019

X

ԳԱՐԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: SARGSYAN GARIK 2811870695 Գ. ՍԱՐԳՍՅԱՆ